Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՃ-1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 9. Երևան - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 03.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:13:30 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 200 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 2 դեպքի վարում՝ վերափաստագրման կազմակերպում, կենսաթոշակի և նպաստի ստացման եղանակի փոփոխման կազմակերպում՝ տեղափոխում «Հայփոստ» ՓԲԸ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 14 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 3 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 5 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 14 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող խմբակներին (գրական, կար, պար, հմուտ ձեռքեր, հիշողության ակումբ, հոգևոր զրույցներ, երգ, առողջ ապրելակերպ, հոգեբանի անկյուն, կինեզոլոգիա):
  - Ճաշարանի 25 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ 12 միջոցառումներին՝
    - Սուրբ Ծննունդ,
    - Հին Նոր տարի,
    - «Մտքի զարգացում» խաղի կազմակերպում,
    - Պ. Սևակի ծննդյան 100-ամյակի նշում,
    - Հյուրընկալում Անանիա Շիրակացի ճեմարանի սաներին /երկու անգամ/,
    - Տեառնընդառաջ,
    - Հ.Թումանյանի 155-ամյակին նվիրված միջոցառում,
    - Միջինքի տոն,
    - Կանանց միջազգային օր,
    - Ծննդյան տոների նշում,
    - Հիսուսի Հարության, Սուրբ Զատկի տոն:

- Թվով 18 շահառու ( շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը՝

- Հին Նոր տարվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxhdu, http://surl.li/rzbtc),
- Հմուտ ձեռքեր խմբակի աշխատանքները (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxhgi, http://surl.li/rzbye),
- Պարույր Սևակի 100 ամյակին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxhht),
- Անանիա Շիրակացու անվան ճեմարանի սաների հյուրընկալում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rybeq),
- Տեառնընդառաջի տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/rybce),
- Հ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rybbd),
- Կանանց տոնին նվիրված հերթական միջոցառումներից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ryazw)
- Լեոնիդ Ենգիբարյանին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ryaza),
- Ծննդյան տոնակատարությունններ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rzbvf, http://surl.li/rzbvv, http://surl.li/sasxe):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 200/200 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 116 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 105 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 51 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 22 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 29 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 95 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 200 |
| 3. | Այլ ծառայություն (նշել)<br>Միջոցառումների կազմակերպում<br>Բաղնիքի ծառայություն | <br>25<br>18 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)